ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
UNION OF BANKS OF ARMENIA СОЮЗ БАНКОВ АРМЕНИИ

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս ռեկտոր Սերգեյ Առաքելյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Հայաստանի բանկերի միություն» ՀԿ-ն (այսուհետ՝ ՀԲՄ), ի դեմս նախագահ Դանիել Ազատյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ հիշատակման դեպքում՝ «Կողմեր»,

կարևորելով և հաշվի առնելով գործընկերության և համագործակցության դերը համատեղ հետաքրքրություն ներկայացնող նախաձեռնությունների իրականացման գործում,

նպատակ ունենալով ներդնել մասնագիտական փորձն ու համատեղ ծրագրերի միջոցով նպաստել Հայաստանի Հանրապետությունում ֆինանսաբանկային ոլորտում մրցունակ աշխատաշուկայի զարգացմանը,

կնքեցին և ստորագրեցին սույն Համագործակցության հուշագիրը, (այսուհետ՝ Հուշագիր):

1. Հուշագրի առարկան

Սույն հուշագրով Կողմերը պայմանավորվում են.

1.1.1 Ըստ անհրաժեշտության կարող են կազմել համատեղ ուսումնական ծրագրեր ինչպես ուսանողների, այնպես էլ ֆինանսաբանկային աշխատակիցների և սկսնակների համար,

1.1.2 Ֆինանսաբանկային ոլորտին վերաբերող ուսումնական ծրագրերի կազմման գործում Ակադեմիան, ըստ նպատակահարմարության, կարող է ներգրավել ՀԲՄ-ի, ՀԲՄ անդամ բանկերի փորձառու ներկայացուցիչներին,

1.1.3 Ակադեմիան, ըստ անհրաժեշտության, կարող է իր կողմից տարբեր հարթակներում կազմակերպվող բաց դասերին, սեմինարներին և քննարկումներին մասնակից դարձնել ՀԲՄ աշխատակիցներին և անդամներին,

1.1.4 ՀԲՄ-ն, ըստ նպատակահարմարության, Ակադեմիայի ունկնդիրներին և պրոֆեսորադասախոսական կազմին կարող է հրավիրել իր կողմից տարբեր հարթակներում կազմակերպվող մասնագիտական հանդիպումներին և քննարկումներին,

1.1.5 ՀԲՄ-ն կարող է Ակադեմիայի ունկնդիրների համար կազմակերպել հանդիպումներ բանկային ոլորտի առաջատար մասնագետների հետ՝ իրենց մասնագիտական փորձն ունկնդիրներին ներկայացնելու նպատակով,

1.1.6 Կողմերը կարող են կազմակերպել համատեղ մասնագիտական քննարկումներ և միջոցառումներ,

1.1.7 Ըստ անհրաժեշտության, Կողմերը կարող են համատեղ իրականացնել վերլուծական-հետազոտական նախագծեր, ինչպես նաև հրապարակել ուսումնամեթոդական նյութեր:

1.2 ՀԲՄ-ն և Ակադեմիան նպատակահարմար են գտնում մշտապես քննարկել և մշակել համագործակցության առավել արդյունավետ այլ ձևաչափեր՝ ուսումնական ծրագրերի կատարելագործման և գործարար մակարդակում դրանց կիրառման նպատակով:

1.3 Կողմերը պատրաստ են համագործակցել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ նախաձեռնությունների շրջանակներում:

2. Հուշագրի գործողության ժամկետը

2.1 Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

2.2 Հուշագիրը կարող է լուծվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս կողմին նախօրոք՝ առնվազն 20 օր առաջ, գրավոր ձևով պատշաճ ծանուցելով: Այս դեպքում ծանուցագրում նշված օրվանից Հուշագիրը համարվում է լուծված:

2.3 Հուշագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքում կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել արդեն պլանավորված և ընթացքի մեջ գտնվող ծրագրերը և միջոցառումներն ավարտին հասցնելու համար:

3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

Սույն Հուշագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են այն կատարելու պարտականությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է այն կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլ արտակարգ և անկանխատեսելի հանգամանքները, որոնք անհնարին են դարձնում Հուշագրով

պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Հուշագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

4. Տարաձայնությունների լուծման կարգը

Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման կապակցությամբ առաջացած տարաձայնությունները կարգավորվում են Կողմերի խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1 Հուշագիրը կազմված և ստորագրված է հայերեն լեզվով՝ հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից, որոնցից մեկը պահվում է ՀԲՄ-ի, իսկ մյուսը՝ Ակադեմիայի մոտ:

5.2 Հուշագիրը ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում կողմերի համար, իսկ համագործակցության շրջանակներում կողմերի միջև ծագած ֆինանսական հարաբերությունները կարգավորվելու են առանձին պայմանագրերով:

5.3 Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ստորագրված է ք. Երևանում 2024 թվականի մայիսի 24-ին երկու օրինակից՝ հայերենով:

6. Կողմերի հասցեները և վավերապայմանները

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ	ՀԲՄ՝ Հայաստանի բանկերի միություն ՀԿ
Հայաստանի Հանրապետություն,	Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, 0054, Փիրումյանների փող. 9	ք. Երևան, 0009, Կորյունի 19ա
Ռեկտոր՝ Ս. Առաքելյան	**Նախագահ՝ Դ. Ազատյան**
Ստորագրություն	Ստորագրություն